

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀՀ Շիրակի մարզի Վարդաքար գյուղի դպրոցի ջեռուցման և օդափոխության նախագծային աշխատանքները կատարված են համաձայն նախագծման առաջադրանքի, ճարտարապետա - շինարարական գծագրերի, ինչպես նաև ՀՀ գործող շինարարական նորմերիև կանոնների ՀՀՆԻՎ-11-3. 02-95, 2.08.02-89, В 50-86 :

Ջեռուցման համար արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանը ընդունված է $t = -25^{\circ}\text{C}$:

Դասասենյակների ջերմաստիճանները ընդունված են համաձայն նորմերի:

Ջերմափոխանցման գործակիցը պատերի համար ստացվել է $K=0.81\text{վտ/մ}^2\cdot^{\circ}\text{C}$, իսկ առաստաղինը՝ $K=0.62\text{վտ/մ}^2\cdot^{\circ}\text{C}$:

Դպրոցի մասնաշենքի ջեռուցման համար ջերմության ծախսը կազմում է $Q_{\text{ջ}}=60200$ կվտ:

Որպես ջերմության աղբյուր հանդիսանում է հարկերում տեղակայված 35կվտ հզորությամբ "BAXI" տիպի կաթսաների միջոցով , որոնք ընդհանուր տարածքից առանձնացված են հրակայուն գիպսակարտոնով:

Ջերմատարը ջուր է՝ $T_1=80^{\circ}\text{C}$ և $T_2=60^{\circ}\text{C}$ պարամետրերով:

Նախագծում, յուրաքանչյուր հարկի համար աձանձին, մշակված է երկխողովականի, հորիզոնական մատակարարումով ,ջերմատարի համընթաց շարժումով ջեռուցման համակարգեր:

Մատակարող խողովակներն անցնում են հարկերի հատակների վրայով, իսկ դռների բացվածքներում՝ հատակի հաստության միջով:

Համակարգի դատարկումը կատարվում է դատարկման , օդի հեռացումը՝ մարտկոցների վրա տեղադրված օդահան ծորակների միջոցով:

Որպես ջեռուցման սարքեր ընտրված են պողպատե պանելային մարտկոցներ $h=500$ մմ:

Շենքի ջերմամատակարարման համար ընտրվել են պոլիպրոպիլենե խողովակներ: Հատակի միջով անցկացված խողովակները ջերմամեկուսացվում են ռետինե խողովակաձև մեկուսիչներով:














Դպրոցում իրականացվում է բնական արտածումով օդափոխություն:


Լաբորատորիաների արտածման պահարաններից իրականացվում է ինքնուրույն համակարգերով արտածում (Ա1): Բուֆետի և տնարարության դասասենյակների գազօջախներից օդը արտածվում է խոհանոցային հովհանոցների օգնությամբ: Բժշկի սենյակում պատուհանին տեղադրված է առանցքային օդամուղ: Սան. հանգույցներից իրականացվում է բնական արտածում՝ P150 տիպի կարգավորիչ ճաղավանդակների մրջոցով:

ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ԹԵՐԹ	ԱՆՎԱՆՈՒՄ	ԾԱՆՈԹ.
ՋՕ-1	ՎԵՐՆԱԳՐԱՅԻՆ ԹԵՐԹ (բացատրագիր)	
ՋՕ-2	ՎԵՐՆԱԳՐԱՅԻՆ ԹԵՐԹ (աշխատանքների ծավալ)	
ՋՕ-3	Առաջին հարկի հատակագիծ	
ՋՕ-4	Երկրորդ հարկի հատակագիծ	
ՋՕ-5	Առաջին հարկի ջեռուցման համակարգի սխեմա	
ՋՕ-6	Երկրորդ հարկի ջեռուցման համակարգի սխեմա	
ՋՕ-7	Բնական օդափոխության համակարգերի սխեմաներ	

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

	Ջեռուցման մատակարարող խողովակ
	Ջեռուցման հետադարձ խողովակ
	Տաք ջրամատակարարման խողովակ
	Սառը ջրի խողովակ
	Խողովակը հատակի հաստության մեջ
	Ջեռուցման մարտկոցը հատակագծում
	Մարտկոցը սխեմայում
	Փական
	Փական դատարկման ծորանով
	Խողովակաշարի թեքություն
	Արտածման ճաղավանդակ
	Բնական արտածման համակարգ
	Արտածման համակարգ

<div>YERANG LLC</div> <div>architectural design and construction</div> <div>PRODUCED BY AN AUTODESK APPLICATION</div>	ՆԳՃ	Մ.ԵՇԻԼԲԱՇՅԱՆ			ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՔԱՐԻ 100 ՏԵՂԱՆՈՑ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ					
	Նախագծեց	Ա.Կարակաշյան								
	Գլխ.մասն.									
						ՋԵՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ		ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
					ԱՆ			ՋՕ-1	7	
	ԱՄՍԱԽՈՒՄ	ԳՈՒՅՔԱՅԱՍԱՐ	ԱՐԽԻՎ No		ՎԵՐՆԱԳՐԱՅԻՆ ԹԵՐԹ (բացատրագիր)		«ԵՐԱՆԳ» ՍՊԸ			